

չուէր առաջին եւ հասարակաց արբուճն համանուն նուազ գաւաթով (աստ, 68), որ սկիզբ կու տար սոյն զուարթ հանդիսին, եւ որով կը լինէր «ընդ գինիս մտանել» (Ագթ. 49. Փաւս. 52, 232. Դան. Ե, 1): Սա իւր հետ ունէր արարողական յատուկ ձեւ մը. որով ասոր հետ շփոթելու չենք քանի մ'օրինակներ, որոց մէջ նոյնպէս կը կոչուի որ եւ իցէ բաժակ. զոր օրինակ Տերենտի ընթրեաց մէջ «գառաջին ոչրախոտրեանցն նուազն մատուցին արքային Պապայ», եւ նա «զոչրախոտրեան գինին ունէր ի մատունս իւր» (Փաւս. 232-3): Ագաթանգեղոս կ'ըսէ՝ թէ առաքեալը կը լցուին «բաժակօք ոչրախոտրեան Հոգւոյն», եւ թէ Հոփիսիմեանք պատրաստեցին Հայոց «բաժակս ոչրախոտրեան» (374, '79), հոգեւորը նիւթականով օրինակուած: Վասակ ուրացողն ալ իւր տաճարին մէջ «յերկարէր զնուազսն ոչրախոտրեան» (Եղիշ. 52): Բոլոր այս բացատրութիւնք կը պարզուին թովմայի խօսքին մէջ՝ թէ Դերենիկ «միշտ զմեզ ոչրախոտրարն զմայլեցուցանէր բաժակաւ» (301). ուր «ուրախարար» ածականը գոյականացած է նախորդ վկայութեանց մէջ, նշանակելով որ եւ է բաժակ որ զուարթութիւն կը բերէ: